Ո Ր Ո Շ ՈՒ Մ

Արգելադրված գույքը հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացնելու մասին

13.10.2021թ. ք. Երևան

Հարկադիր կատարումն ապահովող ծառայության Երևան քաղաքի Ավան, Նոր Նորք և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների բաժնի ավագ հարկադիր կատարող, արդարադատության ավագ լեյտենանտ Արմենուհի Մելքոնյանս ուսումնասիրելով թիվ 06411781 կատարողական վարույթի նյութերը՝

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի կողմից 01.07.2020թ տրված թիվ ԵԴ/28239/02/19 կատարողական թերթի համաձայն պետք է Արման Արթուրի Մեսրոպյանից հօգուտ «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ-ի բռնագանձել 70.348 ՀՀ դրամ և վճռով հաշվարկվող տոկոսները:

Պարտապանից բռնագանձել նաև 5.000 ՀՀ դրամ որպես կատարողական գործողությունների կատարման ծախս:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքով սահմանված և ձեռնարկված հարկադիր կատարման միջոցների արդյունքում պարտապան Արման Արթուրի Մեսրոպյանին պատկանող և «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ-ում գրավադրված գույքի շուկայական արժեքը փորձագետի կողմից 07.10.2021թ. տրված եզրակացության համաձայն կազմում է 65.120 ՀՀ դրամ:

«ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ-ն 11.10.2021թ. թիվ Ա-2027/21 գրությամբ Հարկադիր կատարումն ապահովող ծառայության Երևան քաղաքի Ավան, Նոր Նորք և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների բաժին հայտնել է, որ թիվ ԵԴ/28239/02/19 կատարողական թերթով պարտապան Արման Արթուրի Մեսրոպյանի պարտքը 11.10.2021թ. դրությամբ կազմում է 123.214 ՀՀ դրամ:

Պարտապանի վերաբերյալ առկա են հարուցված բռնագանձման բնույթի այլ կատարողական վարույթներ:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 28, 28.1, 43 հոդվածներով և «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 35.1, 35.2, 35.3, 35.4 և 35.5 հոդվածներով.

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Պարտապան Արման Արթուրի Մեսրոպյանի սեփականության իրավունքով պատկանող և գրավի առարկա հանդիսացող ներքոհիշյալ գույքը՝

h/h	Լոտի անվանումը նկարագիրը	Գնահատման գինը	Մեկնարկային գինը	Գույքի քանակը
1.	Ոսկյա շղթա, հարգը՝ 560,քաշը՝ 2.6 գրամ	40.820 ՀՀ դրամ	30.615 ՀՀ դրամ	1 հատ
2.	Ոսկյա խաչ, հարգը՝ 580,քաշը՝ 1.5 գրամ	24.300 ՀՀ դրամ	18.225 ՀՀ դրամ	1 հատ

Digitally signed by MELKONYAN ARMENUHI 2010950313
Date: 2021.10.28 16:36:56 AMT

ներկայացվում է հարկադիր էլեկտրոնային աճուրդի, էլեկտրոնային համակարգի կիրառմամբ՝ հարկադիր կատարման ծառայության աճուրդի էլեկտրոնային կայքի՝ **www.ajurd.am** միջոցով:

Հարկադիր էլեկտրոնային աճուրդի սկիզբը սահմանել՝ 02.12.2021թ.

Որոշման պատճենը ուղարկել կողմներին:

Հարկադիր կատարողի կայացրած որոշումը կարող է բողոքարկվել վերադասության կարգով որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հետո՝ երկամսյա ժամկետում, կամ վարչական դատարան՝ օրենքով սահմանված ժամկետներում:

Դատական ակտերի հարկադիր կատարման մասին ՀՀ օրենքի 28 հոդվածի 5-րդ մասին համաձայն հարկադիր կատարողի որոշման բողոքարկումը չի կասեցնում կատարողական գործողությունները, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի:

Ավագ հարկադիր կատարող
Արդարադատության ավագ լեյտենանտ Ա.Մելքոնյան

Ծ Ա Ն Ո Թ ՈՒ Թ Յ ՈՒ Ն: Յուրաքանչյուր լոտի հարկադիր էլեկտրոնային աճուրդի ավարտի հաշվարկային ժամ է համարվում կայքում տվյալ լոտի վերաբերյալ ծանուցումը հրապարակելու 10-րդ օրվան հաջորդող աշխատանքային օրվա համապատասխան ժամը:

Յուրաքանչյուր չկայացած հարկադիր աճուրդից հետո՝ երրորդ աշխատանքային օրը, կայքում զետեղվում է կրկնակի հարկադիր էլեկտրոնային աճուրդի դրված լոտի մասին ծանուցումը:

Եթե աճուրդը չի կայացել գնորդ չլինելու կամ լոտի մեկնարկային գնի հավելում չկատարվելու հիմքերով, ապա հաջորդ հարկադիր աճուրդ կազմակերպելուց վաճառվող լոտի մեկնարկային գինն իջեցվում է նախորդ աճուրդի համար սահմանված մեկնարկային գնի տասը տոկոսի չափով: Եթե աճուրդը չի կայացել գնորդի կողմից լոտի գնման գինը սահմանված ժամկետում չվճարվելու կամ առուվաճառքի պայմանագիրը չստորագրելու հիմքերով, ապա լոտի մեկնարկային գնի իջեցում տեղի չի ունենում: Տասնհինգերորդ հարկադիր աճուրդը չկայանալու դեպքում հաջորդ աճուրդներում լոտի մեկնարկային գինը չի իջեցվում: Տասնհինգերորդ հարկադիր աճուրդը չկայանալու դեպքում հարկադիր աճուրդի է ներկայացվում նաև պարտապանին պատկանող՝ օրենքով սահմանված նույն հերթում ներառված այլ գույք, իսկ նույն հերթում ներառված գույքերի անբավարարության դեպքում՝ հաջորդ հերթում ներառված այլ գույք:

«Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 35.4 հոդվածի 4–րդ, 5–րդ և 6-րդ մասերի համաձայն երկրորդ և յուրաքանչյուր հերթական աճուրդից հետո, լոտը չվաճառվելու դեպքում պահանջատերը աճուրդի ավարտից հետո երկու աշխատանքային օրվա ընթացքում իրավունք ունի պահանջի դիմաց այն ընդունելու այդ աճուրդի մեկնարկային գնով: Պահանջատերը պահանջի դիմաց լոտն իրեն հանձնելու վերաբերյալ գրավոր պահանջը կարող է ներկայացնել ծառայություն մինչև չկայացած աճուրդից հետո երկրորդ աշխատանքային օրվա ավարտը: Գույքը /լոտը/ պահանջատիրոջը հանձնվում է վերջինիս կողմից կատարողական գործողությունների կատարման ծախսերը վճարելուց հետո, իսկ գույքի /լոտի/ հանձման կապակցությամբ հարկեր վճարելու պարտականություն առաջանալու դեպքում՝ նաև դրա կատարումը հավաստող փաստաթղթերը ներկայացնելուց հետո: